



ԵՐԿՈՒՇԱՐԹԻ, 12 Օգոստոս, 2024

ՏԵՐՈՒՆԱԿԱՆ ԱՊՈԹՔ

(միասնաբար արտասանուած)

Իմաստութիւն Հօր Յիսուս, քուր ինձ իմաստութիւն վարիս խորհել եւ խօսել եւ գործել առաջի քո յամենայն ժամ. ի չար խորհրդոց, ի բանից եւ ի գործոց փրկեալս ՚ս. եւ ողորմեալ քո արարածոց եւ ինձ բազմամեղիս: Ամէն:

ՍԱՂՄՈՍ 119

ԵՍ ՕՐԷՆՔԷՂ ՀԱՃՈՅՔ Կ'ԱՌՆԵՄ

Քաղցր վարուեցար հեգրս, Տէր,

քու խոստումիդ համաձայն:

Սորվեցուր ինձի՝ ուղիդ դարել ու ճանչնալ

պարուերներդ, որոնց վարահեցայ:

Մինչեւ որ զիս փառապանքի ջնապնեցիր՝ մոլորանքի մէջ էի.

սակայն հիմա խօսքերդ կը գործադրեմ:

Քաղցր ես դուն, եւ բարերար.

սորվեցուր ինձի քու կանոններդ:

Անամօթ մարդիկ ինչպիսի սուրբեր հնարեցին իմ մասիս,

բայց ես սրտանց հրահանգներդ կը գործադրեմ:

Անոնց միտքը փակ է, եւ չեն հասկնար.

բայց ես Օրէնքդ հաճոյք կ'առնեմ:

Տառապանքի մարնուիլս լաւ եղաւ ինձի,

որպէսզի սորվիմ քու կանոններդ:

Ինձի համար շար աւելի թանկագին է քու սահմանած Օրէնքդ,

քան աշխարհի ամբողջ արծայթն ու ոսկին:

ՇԱՐՎԱՆ

Ծով կենցաղոյս Հանապազ զիս ալէկոծէ:

Մըրրկեալ ալիք թըշնամին ինձ յարուցանէ:

Նաւապետ բարի լեր անձին իմոյ ապաւէն:

ԱՊՈԹՔ

Տէր, լսէ մեր աղօթքներդ, երբ անձկութեան մէջ ենք, Դուն եղիր մեր պաշտպանը: Օգնութիւն որկէ մեզի Քու սրբարանէդ, եւ գորացուր մեզ: Լսէ մեր աղօթքներդ, ընդունիր մեր խնդրանքներդ: Մենք Քու փութած փրկութեամբդ պիտի ցնծանք եւ ուրախանանք եւ յաղթանակի դրօշդ բարձր պիտի բռնենք: Դուն ես որ կը փրկես մեզ. Դուն ես որ պարասխան կու փաս մեր աղօթքներուն: Դուն ես որ Քու գորութեամբդ մեծամեծ յաղթանակներ կը պարգեւես: Դուն ես մեր յոյսն ու ապաւէնը, Դուն ես մեր փոխարէն պարերագմողը, եւ միայն Քեզի կը վայելէ փառքն ու պարիւր. յաւիտեանս. ամէն:

ՇԱՐՎԱՆ - ՍՈՒՐՔ ԱՍՏՈՒՄ

Սուրբ Աստուած, սուրբ եւ հզօր, սուրբ եւ անմահ, որ յայտնեցար վասն մեր, ողորմեա մեզ: (X3)

Փրկել զմեզ ի փորձութենէ եւ յամենայն վրանգից մերոց:

Եւ եւս խաղաղութեան գՏէր աղաչեսցուր: Վասն լսելի լինելոյ Տեառն Աստուծոյ ձայնի աղաչանաց մերոց՝ բարեխօսութեամբ սուրբ Աստուածածնին, եւ իջանելոյ ի վերայ մեր ողորմութեան եւ գթութեան Տեառն Աստուծոյ: Ամենակալ Տէր Աստուած մեր, կեցո՛ւ եւ ողորմեա:

ՇԱՐՄԱՆ-ՍՊՈՐՔ

*Տէր ողորմեա, Տէր ողորմեա, Տէր ողորմեա, Տէր ողորմեա:
Ամենասուրբ Երրորդութիւն, սուր աշխարհիս խաղաղութիւն:
Եւ Հիւանդաց բժշկութիւն, ննջեցերոց արքայութիւն:
Արի Աստուած Հարցն մերոց, որ ապաւն էս նեղերոց:
Տէր ողորմեա, Տէր ողորմեա, Յիսուս Փրկիչ մեզ ողորմեա:*

ՍԱՂՄՈՍ 66

ԳՈՂԱԲԱՆՈՒԹԵԱՆ ԵՐԳ

Յնծութեան աղաղակներով զԱստուած փառաբանեցէք, ով համայն աշխարհի ներքողեցէք անոր փառաւոր անունը, փառաւոր օրհներգութիւն ընծայեցէք անոր: Աստուծոյ ըսէք.- «Սքանչելի են գործերդ. այնքան մեծ է զօրութիւնդ, որ թշնամիներդ ականայ պիտի խոնարհին քու առջեւդ: Ամբողջ աշխարհը կ'երկրպագէ քեզի, եւ ներքողէ քեզ, կը ներքողէ քու անունդ»: Եկէք եւ փեսէք Աստուծոյ գործերը, մարդոց համար կատարած անոր սքանչելի գործերը: Անիկա ծովը ցամաքի վերածեց, եւ իր ժողովուրդը քալելով անցաւ գետէն. հոն մենք ուրախացանք Աստուծոյ, որ իր զօրութեամբ յաւիտեան կը փրկէ: Անոր աչքը միշտ կը հսկէ ազգերուն վրայ. ուստի ապստամբները թող չհպարտանան: Օրհնաբանեցէք մեր Աստուածը, ով ժողովուրդներ, թող ամենքը լսեն ձեր բարձրաղաղակ օրհներգութիւնը: Անիկա մեզ ողջ պահեց, եւ թոյլ չտուաւ որ սասանինք: Այո, մեզ փորձեցիր, ով Աստուած, փորձի ենթարկեցիր այնպէս՝ ինչպէս արծաթը հալոցէն կ'անցընեն գրելու համար: Թոյլ տուիր որ փորձութեան մէջ իյնանք, ծանր նեղութիւններ կրել տուիր մեզի: Թոյլ տուիր որ թշնամիներ ձիերով մեր գլուխը կոխկոտեն, հուրէ եւ ջուրէ անցուցիր մեզ, բայց ի վերջոյ մեզ դուրս բերիր նեղութիւններէն եւ հանգստացուցիր: Ողջակէզներով պիտի մտնեն փաճարդ, եւ մատուցանեն ինչ որ քեզի ուխտեցի, ինչ որ քեզի ընծայել խոստացայ՝ երբ նեղութեան մէջ էի: Պարարտ ողջակէզներ պիտի ընծայեն քեզի, խոյր պիտի մատուցանեն գոհաստեղանիդ վրայ, մատուցաւ ցուլեր ու նոխազներ պիտի գոհեն, եւ անոնց բոյրը բարձրացնեն դէպի քեզ: Եկէք լսեցէք, ով աստուածավախ մարդիկ, ձեզի պատմեմ՝ թէ Աստուած ինչ ըրաւ ինձի համար: Օգնութեան աղաղակով իրեն դիմեցի, եւ անդադար փառաբանեցի: Եթէ սրտիս մէջ անօրէնութիւն ունենայի, Տէրը պիտի չստեր զիս: Սակայն իրապէս Աստուած լսեց զիս, իր ուշադրութեան արժանացուց բարձրաղաղակ աղօթքս: Օրհնեալ է Աստուած, որ աղօթքս չմերժեց, եւ իր սէրը ինձի յայտնել չզլացաւ:

Պ*ահապան ամենայնի Քրիստոս,
աչ քո հովանի լիցի ի վերայ իմ ի տուէ եւ ի գիշերի,
ի նստիլ ի տան, ի գնալ ի մանապարհ,
ի ննջել եւ ի յառնել, զի մի երբեք սասանեցայց.
եւ ողորմեա՛ քո արարածոց եւ ինձ բազմամեղիս:*



ԳՈՂԱԲԱՆՈՒԹԵԱՆ ԵՐԳ

Այս Սաղմոսը կը սկսի կոչով, «Տնծութեան աղաղակով զԱստուած փառաբանեցէք ով համայն աշխարհ»: Կոչ, որ սակայն, կը սպասուի այդ օրը, երբ իրապէս համայն աշխարհ պիտի երկրպագէ Աստուծոյ, ինչպէս նաեւ Յիսուս Քրիստոսի: Պօղոս Առաքեալ նոյն միտքը կ'արտայայտէ Փիլիպպեցիներուն նամակին մէջ, ըսելով. «Յիսուսի անունին ծունկի պիտի գան բոլորը»: Այսօր, րակաւին այդ երեւոյթը չենք տեսներ: Ընդհակառակը, աւելի զԱստուած անարգող, սրբութիւնները ոտնակոխող անձեր: Այդ մասին ալ Պօղոս Առաքեալ կը գրէ իր աշակերտին՝ Տիմոթէոսի, ըսելով. «Վերջին օրերուն դժուար ժամանակներ պիտի գան» եւ շարքը կը շարունակէ այդ երեւոյթներուն Բ Տիմոթէոս 3:1-5:

Ի՞նչ բանի համար պէտք է օրհներգութիւն ընծայեն: Աստուծոյ կարարած սքանչելի գործերուն եւ գորութեան համար: Ի՞նչ գործերու մասին է խօսքը: Սկսեալ սրեղծագործութենէն մինչեւ փրկագործութիւն: Տակաւին, այն նախախնամութեան որ Աստուած կը ցուցաբերէ: Հոս նաեւ կը յիշէ այն ազգաբազումը որ Աստուած կարարեց երբ Իսրայէլի ժողովուրդը դուրս բերաւ Եգիպտոսէն ծովը ցամաքի վերածելով: Որ նախարհիպն էր Քրիստոսով կարարուելիք փրկութեան, մեղքի սպրկութենէն:

Այս Սաղմոսին մէջ նաեւ կը ներկայացնէ թէ ինչպէս Աստուած թոյլ կու տայ որպէսզի Իր ժողովուրդը փորձութեան մէջով անցնի, այնպէս ինչպէս արծաթը հալոցէն, գրելու համար: Ահա թէ ինչպիսի օգտակարութիւն կրնան ունենալ փորձութիւնները, որոնց նպատակը, ոչ թէ ծուղակը ձգել է, այլ՝ գրել, մաքրել, քաշել, քանդակել եւ գեղեցիկի վերածել: Ահա խոստումի մը կարարումը նաեւ կը ներկայացնէ, երբ նեղութեան եւ դժուարութեան մէջով կ'անցնէք: Մենք ալ յաճախ երբ նեղութեան եւ դժուարութեան մէջով կ'անցնինք, եւ անել կացութեան դիմաց կ'ըլլանք, կը սկսինք ուխտեր ընել. այս պիտի ընեն, այսպէս պիտի ընեն: Հոս եւս կ'ըսէ. «Ողջակէզներով քանդարդ պիտի մընեն եւ պիտի ընծան ինչ որ խոստացայ»: Ողջակէզը ամբողջութեամբ ողջ-ողջ այրուելու համար եղած գոհն էր Աստուծոյ ընծայում, որ անցեալին Աստուած տուած էր Իսրայէլին որպէսզի անով դաստիարակուի եւ հասնի այն գիտակցութեան, որուն համար Պօղոս Առաքեալ կ'ըսէ. «Ձեր անձերը ընծայեցէք Աստուծոյ գոհասեղանին»: Ուրեմն, Աստուծոյ ուզածը այդ գոհը չէ, Աստուծոյ ուզածը մեր անձերը Իրեն ընծայելն է, Իսկ Իրեն ընծայել կը նշանակէ, Իրեն վերադառնալ, Իրեն հետ ըլլալ, Իր ներկայութեան մէջ ըլլալ, Իր սիրոյն մէջ ըլլալ:

Վերջին մասով, Սաղմոսերգուն անգամ մը եւս կոչ կ'ուղղէ եւ կը հրաւիրէ աստուածավախ մարդիկը որպէսզի անոնց պարմէ ու վկայութիւնը տայ, թէ Աստուած ինչ ըրաւ իրեն: Երբ օգնութեան կանչեց, Աստուած լսեց ու պարասխանեց, եւ առաւել եւս Իր սերը ցոյց տուաւ: Որովհետեւ վերջին հաշուով երբ մենք ալ մեր խնդրանքներով, մեր նեղութիւններով, դժուարութիւններով Աստուծոյ կը դիմենք եւ Անկէ օգնութիւն կը խնդրենք, եւ Ան կը լսէ ու կը պարասխանէ, կը մոռնանք այն կարեւոր բաժինը, որ անով Իր սերը ցոյց կու տայ իրաքանջիրիս նկատմամբ: Նախ մէկ բան որոշ է, ու պէտք չէ մոռնալ, որ սրեղծագործութիւնը իր ամբողջութեամբ, որուն պատկումը մարդը ինք, ուրիշ բան չէ եթէ ոչ Աստուծոյ սիրոյ արտայայտութիւնը: Երբ Յովհաննէս Առաքեալ կը յայտարարէ ըսելով. «Աստուած սեր է», ահա այդ սերնէն բխած է այս ամենը: Այնպէս Աստուած այս բոլորին կարիքը չունի: Մենք ալ հետեւաբար, երբ կը սրանանք մեր աղօթքներուն պարասխանը, չառնենք այնպէս մը, որ Աստուած պարտաւոր է այդ բոլորը ընելու: Մենք պէտք խնդրենք, Ինք՝ կարարէ: Արիկա եղաւ մեր տէրը, Ինք՝ ծառան: Չնայած Աստուած Իր միաձին Որդիին միջոցաւ յանձն առաւ այդ ծառայութիւնը: Քրիստոս առիթով մը պիտի ըսէ. «Մարդու Որդին եկաւ ոչ թէ ծառայութիւնը սրանալու, այլ՝ ծառայելու, եւ Իր կեանքը ի սպաս դնելու»: Մէկ այլ ուրիշ առիթով. «Գերագոյն սերը այն սերն է, որ մարդ իր կեանքը կու տայ իր նմանին համար»: Ուրեմն, Աստուծոյ կարարածները ուրիշ բան չեն եթէ ոչ միայն ու միայն սիրոյ արտայայտութիւն:

Այսօր մենք, որքանով կը վկայենք այդ սիրոյ մասին, եւ մեր վկայութիւնը կու տանք ըսելով. «Այնպէս ինչպէս Աստուած զիս սիրեց, քեզ ալ կը սիրէ»: Բան մը, որ այսօր ամբողջ աշխարհը այդ ախպէն կը փառասալի, սիրոյ պակաս: Եկէք, խնդրենք, որ Աստուած Իր այդ անսահման սերնէն կաթիլ մը կաթեցնէ մեր սրտերուն մէջ, որպէսզի զԻնք սիրենք եւ մեր նմանը: